Հայկական ակնաբուժության նախագիծ
բարեգործական հիմնադրամ

1992թ.-ին ամերիկահայ ակնաբույժ Ռոջեր Օհանեսյանն ԱՄՆ-ում հիմնադրել է Հայկական ակնաբուժության նախագիծ (ՀԱՆ) բարեգործական կազմակերպությունը, որի հայաստանյան գրասենյակը ստեղծվել է 2002թ.-ին: Կազմակերպության առաքելությունն է կանխարգելել ձեռքբերովի կուրությունը Հայաստանում, եւ ակնաբուժական ծառայությունները հասանելի դարձնել Հայաստանի բոլոր բնակիչներին:

Ծրագրի շրջանակներում բազմաթիվ ականավոր ակնաբույժներ ԱՄՆ-ից եւ այլ երկրներից այցելել են Հայաստան՝ իրենց գիտելիքները եւ փորձը փոխանցելու հայ գործընկերներին: Այս տարիներին Հայաստանին են հատկացվել նաեւ մեծաքանակ ժամանակակից սարքավորումներ եւ դեղորայք:

ՀԱՆ-ը սերտորեն համագործակցում է ՀՀ եւ արտերկրի կառավարությունների, միջազգային կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, ակնաբուժական եւ բժշկական հաստատությունների, ընկերությունների, անհատների, կորպորատիվ գործընկերների հետ սփյուռքում եւ Հայաստանում:

Ներկայումս ՀԱՆ-ն իրականացնում է համապարփակ, մեծածավալ եւ փոխկապակցված բազմաթիվ ծրագրեր, որոնք իրականացվում են միջազգային չափանիշներին համապատասխան:

ԼՈՒՅՍ ՀԱՅԻ ԱՉՔԵՐԻՆ սկսած 2003թ.

ՀԱՆ-ի խորհրդանիշներից մեկը գերժամանակակից Աչքի շարժական հիվանդանոցն (ԱՇՀ) է, որը ձեռք է բերվել սփյուռքի բարերարների շնորհիվ եւ մինչ օրս ակնաբուժական բարձրորակ ծառայություններ է մատուցում բնակչությանը: ԱՇՀ-ի՝ Հայաստան բերվելուց ի վեր՝ 2003թ.-ից ՀԱՆ-ն իրականացնում է «Լույս հայի աչքերին» ծրագիրը, որը միտված է Հայաստանում ակնաբուժական ծառայությունների համակարգը հզորացնելուն, ինչպես նաեւ կուրության կանխարգելմանը եւ ակնային հիվանդությունների բուժմանը: «Լույս հայի աչքերին» ծրագրի 5 փոխկապակցված ուղղություններն են՝ բուժօգնություն, տվյալների հավաքագրում եւ հետազոտական աշխատանքներ, բժշկական ուսուցում եւ վերապատրաստում, հանրության իրազեկում, կարողությունների զարգացում:

Արդյունքներ՝ 2003թ.-ից մինչեւ 2019թ. հուլիս

- **435.380** մարդ (ներառյալ 183 378 երեխա) ակնային զննում է անցել իր կամ մոտակա համայնքում
- **52.000** մարդ անցել է խորացված հետազոտություն ԱՇՀ-ում
- **19.491** մարդ ԱՇՀ-ում վիրահատվել է
- **7.802** մարդ ԱՇՀ-ում լազերային բուժում է ստացել
- **70.000** ակնոց է տրամադրվել

Ընդհանուր ակնային հետազոտություններին, ինչպես նաեւ լազերային միջամտություններին մասնակցում են տվյալ մարզում բնակվող՝ 18 տարեկան եւ դրանից բարձր անձինք: Վիրահատություններն անցկացվում են հատուկ սոցիալական խմբերում ընդգրկված անձանց համար:

ՀԱՆ ԲՀ-ն իրականացնում է նաեւ մի շարք այլ ծրագրեր սոցիալապես խոցելի խմբերում ընդգրկված անձանց համար: 2016թ.-ից ի վեր իրականացվել է աչքի եղջերաթաղանթի **125** փոխպատվաստում եւ աչքի **45** պրոթեզավորում:

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՆԱՅԻՆ ԶՆՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ սկսած 2004թ.

Կարեւորելով երեխաների շրջանում ակնային խնդիրների կանխարգելումը՝ ՀԱՆ-ը 2004թ.-ից մինչ օրս դպրոցականների շրջանում իրականացրել է բազմաթիվ ստուգումներ եւ հանրային կրթության դասեր՝ նվիրված տեսողությանը եւ դրա պահպանման կանոններին: Կան հիվանդություններ, որոնց ժամանակին հայտնաբերումը երեխաներին կփրկի տեսողության լուրջ խաթարումներից:

ՀԱՆ-ն իր բազմամյա գործընկեր Լոս Անջելեսի մանկական հիվանդանոցի հետ 2018-19թթ իրականացրել է ակնային զննման ընդգրկուն ծրագիր Երեւանում եւ ՀՀ մարզերում, որի արդյունքում հանրապետության շուրջ 60 դպրոցներում 22.000 երեխա ակնային զննում է անցել, խնդիր ունեցող շուրջ 3.500 երեխա մասնագիտացված կլինիկաներում ակնային խորացված հետազոտության հնարավորություն է ստացել:

Հետազոտության տվյալները հիմք կհանդիսանան 6-14 տարեկանների շրջանում ակնային հիմնական հիվանդությունների եւ խնդիրների հիվանդացության պատկերը ստանալու, ինչպես նաեւ «Ավետիս» համակարգի ստեղծման համար: «Ավետիս»-ն ապահով եւ անվտանգ, ամպային տեխնոլոգիաներով գործող առողջապահական տվյալների գրանցման պացիենտակենտրոն հարթակ է: Սա երեխաների շրջանում ակնային խնդիրների վերհանման եւ բուժման շարունակելիությունը բարելավելու առաջին համապարփակ փորձն է:

ՄԱՆԿԱԿԱՆ ԿՈՒՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ սկսած **2012թ.**

Մանկական կուրության կանխարգելման գերազանցության կենտրոնը ստեղծվել է 2014թ.-ին՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հետ գործակցությամբ: Կենտրոնի նպատակն է հիմնել եւ զարգացնել ակնաբուժական մասնագիտացված ներուժ՝ օժանդակելու Հայաստանում եւ տարածաշրջանում անհասության ռետինոպաթիայով պայմանավորված մանկական կուրության կանխարգելմանը: Սա 2010թ.-ին ՀԱՆ-ի մեկնարկած «Հայաստանում անհասության ռետինոպաթիայի ստուգման եւ բուժման ազգային ծրագրի» տրամաբանական շարունակությունն է: Վերջին տարիներին կենտրոնում արդեն բուժում են ստանում երեխաներ տարածաշրջանի մի քանի երկրից:

Արդյունքներ՝ 2010թ.-ից մինչեւ 2019թ. հուլիս

- **8.794** թիրախային խմբի (34 շաբաթ գեստացիոն տարիքից փոքր եւ/կամ 2.000գր. պակաս քաշով) նորածին երեխա ենթարկվել է առաջնային եւ ընթացիկ ստուգումների, որից առաջնային ստուգման՝ 6.720-ը
- **22.193** ԱՌ ստուգում է իրականացվել (44.386 աչք)
- **192** երեխա ստացել է 337 լազերային բուժում (ֆոտոլազերկոագուլյացիա)
- **116** երեխա ստացել է 194 հակա-անգիոգեն բուժում
- **60** երեխա ենթարկվել է 74 վիտրեոռետինալ եւ հարակից վիրահատությունների եւ միջամտությունների:

ԱԿՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ սկսած 2015թ.

Այս հնգամյա ծրագրի նպատակն է խթանել ակնաբուժական ծառայությունների հասանելիությունը ՀՀ մարզերում բնակչության բոլոր շերտերի համար՝ հիմնելով երկրորդական մակարդակի ակնաբուժական կենտրոններ Հայաստանի հինգ մարզում եւ ապահովելով դրանց շարունակական աշխատանքը: Առաջին կենտրոնը ստեղծվել է 2015թ.-ին՝ Իջեւանում: Առ այսօր մարզային ակնաբուժական կենտրոններ են բացվել նաեւ Սպիտակում (2016թ.), Կապանում (2017թ.), Գյումրիում (2018թ.): Ակնաբուժական կենտրոնները, որոնք տեղակայված են մարզային հիվանդանոցներում եւ բժշկական կենտրոններում, փոխարինում են Աչքի շարժական հիվանդանոցին՝ ողջ տարվա ընթացքում բարեգործական հիմունքներով կատարելով վիրահատություններ սոցիալապես անապահով բնակչության համար, ինչպես նաեւ տրամադրում են վճարովի ծառայություններ վճարունակ բնակիչներին՝ ապահովելու մարզային ակնաբուժական կենտրոնների գործունեության շարունակականությունը:

Արդյունքներ՝ 2015թ.-ից մինչեւ 2019թ. հուլիս

- **9.181** մարդ անցել է ակնային խորացված հետազոտություն
- **2.597** մարդ վիրահատվել է
- **220** մարդ լազերային բուժում է ստացել:

ԴԻԱԲԵՏԸ ԵՎ ԱՉՔԻ ԽՆԱՄՔԸ սկսած **2017թ.**

ՀԱՆ-ը Շաքարախտի համաշխարհային հիմնադրամի աջակցությամբ 2017թ.-ի մարտից իրականացնում է «Հայաստանում կուրության կանխարգելում շաքարախտային ռետինոպաթիայից» եռամյա ծրագիրը՝ նպատակ ունենալով կանխարգելել շաքարախտով պայմանավորված ակնային հիվանդություններից առաջացող կուրությունը: ՀԱՆ-ի շնորհիվ Հայաստանում շաքարային դիաբետ ունեցող յուրաքանչյուր հիվանդ գերժամանակակից սարքավորմամբ ակնահատակի նկարահանման, շաքարախտային ռետինոպաթիայի հայտնաբերման եւ բուժման հնարավորություն ունի: Բուժումն իրականացվում է Աչքի շարժական հիվանդանոցում կամ ՀԱՆ-ի ստեղծած մարզային ակնաբուժական կենտրոններում:

Արդյունքներ՝ 2017թ.-ից մինչեւ 2019թ. հուլիս

- **14.686** շաքարային դիաբետ ունեցող մարդ անցել է ակնային հետազոտություն
- **11.500** մարդ ակնահատակի նկարահանում է անցել
- **6.114** մարդու մոտ հայտնաբերվել է դիաբետիկ ռետինոպաթիայի կամ մակուլյար այտուցի առկայություն
- **842** մարդ ստացել է դիաբետիկ ռետինոպաթիայի լազերային բուժում
- **586** մարդ անցել է շաքարային դիաբետով պայմանավորված կատարակտի վիրահատություն:

Ծրագրի շրջանակներում շաքարային դիաբետով պայնամավորված աչքի հիվանդությունների կանխարգելման եւ բուժման թեմայով Երեւանում եւ ՀՀ մարզերում վերապատրաստվել է 386 մարզային ակնաբույժ, ներզատաբան եւ ընտանեկան բժիշկ, շաքարային դիաբետ ունեցողների բուժման եւ առողջ ապրելակերպի թեմայով հանրային կրթության դասընթացներին մասնակցել են 178 մարզային ընտանեկան բժիշկ եւ 67 բուժքույր:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Հայկական ակնաբուժության նախագիծը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում մասնագիտական կրթությունը: Գործունեության առաջին տարիներից հայաստանյան ակնաբույժների համար իրականացվել են **կրթության եւ վերապատրաստման երկարաժամկետ ծրագրեր** ԱՄՆ-ի ակնաբուժական առաջատար կենտրոններում, ինչի արդյունքում ակնաբույժները հայրենիք են վերադարձել՝ զինված մասնագիտական գիտելիքներով, հմտություններով եւ անհրաժեշտ սարքավորումներով: Տարիների ընթացում ՀԱՆ-ը նախաձեռնել է կրթական այլ ծրագրեր եւս, ինչպիսիք են՝ **Առցանց վերապատրաստման հարթակ** ակնաբույժների եւ առաջնային օղակի բուժաշխատողների համար, երիտասարդ ակնաբույժների **Հաջորդ սերունդ** կրթական ծրագիր, **վերապատրաստման դասընթացներ** ակնաբույժների, ներզատաբանների եւ ընտանեկան բժիշկների համար, **առցանց կրթության դասընթացներ** նեոնատոլոգների եւ մանկաբույժների համար: ՀԱՆ-ի շնորհիվ յուրաքանչյուր տարի առողջապահության ոլորտի 50 կազմակերպիչներ եւ մասնագետներ հնարավորություն են ստանում անվճար մասնակցելու **Առողջապահության բարելավման ինստիտուտի (IHI)** առցանց դասընթացներին:

ՀԱՆ-ը հեղինակել եւ հրատարակել է ակնաբուժությանը վերաբերող մի շարք մասնագիտական ձեռնարկներ ոչ միայն ակնաբույժների, այլ նաեւ ներզատաբանների, նեոնատոլոգների, ընտանեկան բժիշկների եւ այլն մասնագետների համար:

ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՀԱՆ-ի ուշադրության կենտրոնում է նաեւ հանրային կրթությունը մեծահասակների եւ երեխաների համար: Տեղեկատվական նյութերը մեծահասակների համար հիմնականում ներկայացնում են ակնային տարբեր հիվանդություններ, դրանց նախանշանները, ժամանակին վերհանման անհրաժեշտությունը եւ բուժումը, ինչպես նաեւ առողջ ապրելակերպի սկզբունքները:



Հանրապետության տարբեր մարզերի եւ Երեւանի դպրոցներում պարբերաբար կազմակերպվում են աչքի առողջությանը եւ խնամքին նվիրված բաց դասեր եւ տարաբնույթ միջոցառումներ, որոնց մասնակցել է շուրջ 15.000 երեխա: Մանկական վերջին հրատարակություններից են «Տեսունիկի տեսողության խաղը» ձեռնարկը եւ ուսուցիչների մեթոդական ուղեցույցը՝ նախատեսված կրտսեր դպրոցի համար եւ հաստատված ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կողմից: Այն արդեն տարածվել է հանրապետության դպրոցների շուրջ 3.000 աշակերտների շրջանում: Ստեղծվել է նաեւ «Տեսունիկ» սեղանի խաղը՝ 9-14 տարեկան դպրոցականների համար: